



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեններ և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9386

(բ) Բագվի Կոմիտեյի Կուսկարինես

91

ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵՆՔ

ԱԴՐԿՈՄԿՈՒՄԻ (Բ) ԳՅՈՒՂԱԿԱՆ
ԲԶԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

(Նյութերի ժողովածու)



Բագվա. — 1931

3ԿՊ5
4-49


09 AUG 2013

31875
7-45

1 DEC 2009

25 SEP 2006

Ադրբեյջանական (թ) Բազմի Կոմիտեի Կուսաքինես



ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵՆՔ
ԱԴՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ (Թ) ԳՅՈՒՂԱԿԱՆ
ԲԶԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

(Նյութերի ժողովածու)



Բագու - 1931



ՎԵԿԱՊԵ-Ի (Բ) ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ԲՁՋԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

(Հաստատված ՎԵԿԱՊԵ-Ի (Բ) ԿԵՆՏԱԿՈՒՄԻ Կողմից 1930 թ.
26 նոյեմբերի)

Բջջի կառուցվածքը

Տպագրված ե
„Ա. Զ Ե Բ Ն Ե Շ Բ“
տպարանում
Բագու, Բ.-Մորոկ.
և Կրամնո-Պրեսնեն.
Փողոց, անկյունում.



Գլանված. 2337

Գաղտնական

Տիտղոս 1000

Առ. գ. Ե6

Կ3043-63

1. Հիմնական կուսակցական կազմակերպությունը կուսարչիչն է, վորը հաստատվում է կուսակցական կոմիտեի կողմից՝ կուսակցության յերեք խակական անդամից վոչ պակաս կազմով (ՎԵԿԱՊԵ-Ի (Բ) կանոնադրություն):

2. Համատարած կոլեկտիվացման ռայոններում, վորպես կանոն, ՎԵԿԱՊԵ-Ի (Բ) բջիջներ են կազմակերպվում կոլխոզներում: Բջիջները ստեղծում են կուսախմբակներ և ընտրում են կուսակազմակերպիչներ՝ արտադրական մասերում, բրիգադներում և այլն: ՎԵԿԱՊԵ-Ի (Բ) կոլխոզային բջիջները, վորպես կուսորդաններ, ակտիվ մասնակցություն են ցույց տալիս գյուղի քաղաքական և տնտեսական կյանքին: Համատարած կոլեկտիվացման ռայոնների առանձին գյուղերում, վորտեղ տնտեսությունների կեսից պակասն ե կոլեկտիվացված, զյուրքական բջիջները մնում են:

Վոչ համատարած կոլեկտիվացման ռայոն-ներում, վորպես կանոն, մինչև տնտեսություն-ների մեծամասնության կոլեկտիվացումը մնում էն գյուղական բջիջները, վորոնք նույնպես կազմակերպում են կուսամբբակներ և ընտրում են կուսկազմակերպիչներ տերիտորիալ ցուցանիշի համաձայն (կարտալ, շեն, թաղ և այլն): Բացառություն թույլատրվում է այն գյուղերի վերաբերմամբ, վորոնց տնտեսությունների կեսը կոլեկտիվացված ե. այդակեղ կազմակերպվում են կոլխոզային կուսակցական բջիջներ:

Ծ անոթություն.—Վոչ համատարած կոլեկտիվացման սալոններում՝ խոշոր գյուղերում (սահմանական) թույլատրվում է կոլխոզային բջիջներ կազմակերպել մինչեւ նույնիսկ կոլեկտիվացման տոկոսը չի համում 50%-ի:

3. Ուայոնական ու կուսակցական կոմիտեների վորոշումով և շրջանային (յերկրային) կոմիտեյի կամ ազգային կոմիտեների կենտրոնների հաստատումով կարող են կազմակերպվել համակոլխոզային բջիջներ:

ա) յեթե գյուղի (սահմանիցայի) տերիտորիայում կան մի քանի ինքնուրույն կոլխոզային բջիջներ.

բ) ավելի խոշոր կոլխոզներում, յեթե այնտեղ կան 50-ից փոչ պակաս կոմունիտներ.

գ) յեթե գյուղի տերիտորիայում կան մի քանի ինքնուրույն խորհրդային, կոոպերատիվ յերկաթուղային բջիջներ:

Այդ բոլոր դեպքերում՝ համակոլխոզային բջիջի մեջ միացվող բջիջները պահպանվում են ցեխքջիջների իրավունքներով:

4. Մեքենա-տրակտորային կայանում աշխատող կոմունիտները կազմում են առանձին բջիջ, վորը —

ա) մտնում է համակոլխոզային բջիջի մեջ ցեխային բջիջի իրավունքներով, յեթե մեքենա-տրակտորային կայանը սպասարկում է միայն մի կոլխոզի.

բ) հանդիսանում է հատուկ կանոնադրային բջիջ և գտնվում է ռայոնի անմիջական ղեկավարության տակ, յեթե մեքենա-տրակտորային կայանը սպասարկում է ինքնուրույն բջիջներ ունեցող մի քանի կոլխոզների:

Բջջի ղեկավար որպանները

5. Բջջի բարձրագույն ղեկավար որպանն է նրա անդամների ընդհանուր ժողովը: Ընդհանուր ժողով հրավիրվում է բյուրոյի կողմից, կամ ավյալ բջջի կուսանդամների ^{1/3}-ի պահանջով: Բջջի ժողովները հրավիրվում են կանոնավոր կերպով ամսական 2 անգամ և կայացված են համապրում, յեթե ներկա ե տվյալ բջջի կուսանդամների յեղած կազմի կեսից վոչ պականը:

Սմեն մի ժողովը տանելու համար ընտրվում է նախագահություն կամ նախագահ և քարտուղար, վորը նիստի արձանագրությունն ե գրում: Բոլոր հարցերը վճռվում են տվյալ բջջի կուսանդամների ձայների հասարակ մեծամասնությամբ:

Ընդհանուր ժողովը քննարկում է ընդհանուր քաղաքական, անտեսական, պրոֆմիութենական, համակուսակցական և տեղական կյանքի հարցե-

բը. հաստատում ե բջջի աշխատանքի պլանը, լուսմ և քննարկում ե բջջի բյուրոյի հաշվետվությունները՝ վերջինիս կատարած աշխատանքի մասին. քննում ե կուսակցության անդամ և թեկնածու մտնելու համար արփող գիմումները. քննարկում ե կուսակցությունից հեռացնելու, բջջի անդամների վրա տույժեր զնելու հարցերը. պատվիրակներ ե ընտրում ույյոնական կուսկոնֆերանսների համար. լուսմ և քննարկում ե Համլենկոմյերիտմիության բջիջների, իր կոլխոզի և ձեռնարկների, գյուղի հիմնարկի անկուսակցական կազմակերպությունների Փրակցիաների, նույնպես ե բջջի առանձին անդամների իրենց աշխատանքի մասին արփող զեկուցումները և հաշվետվությունները:

6. Բջջի ընդհանուր ժողովս ընտրում ե բյուրո կուսակցության անդամներից, վեց ամիս ժամանակով և Շ անդամից ու 2 թեկնածվից վոչ ավելի կազմով. այդ թիվը մեծացնել թույլատրվում ե միայն ույյոնական կուսկոմիտեյի համաձայնությամբ (այն բջիջը, վորն ունի Շ անդամից պակաս, բյուրոյի փոխարեն ընտրում ե քարտուղար): Բյուրոն ժողովների միջև յեղած ժամանակաշրջանում զեկավարում ե բջջի ամբողջ աշխատանքը:

7. Բջջի բյուրոն պարտականությունները բաժանում ե իր անդամների միջև և իր կազմից քարտուղար և ջոկում՝ այդ մասին հաղորդելով մոտակա ընդհանուր ժողովին: Բյուրոն իր կազմից ներկայացուցիչներ և ջոկում՝ Համլենկոմյերիտմիության բջում աշխատելու (ամրացված),

կազմակերպիչներ աշխատանքի առանձին ճյուղերի՝ բաժարակության, չքավորների, կանանց և այլն, բաժանում ե կուսակցատանքը բջջի բոլոր անդամների միջև, հետևում ե կատարելուն (այն բջիջներում, ուր բյուրոններ չեն ընտրվում, կուսպարտականությունները բաժանում ե բջջի ժողովը). բյուրոն կյանքի մեջ ե անցկացնում և հետեւում ե, վոր բջջի անդամները կատարեն կուսկանոնագրությունը և վերագաս կուսորգանների վորոշումները, բջջի ընդհանուր ժողովների վորոշումները, քննարկում ե կուսպիսցիպլինայի և կուսորգանների գիրեկափակների խախտման բոլոր գեպքերը:

8. Բջջի բյուրոն՝ կուսակցության հերթական անելիքների և տեղական կազմակերպությունների վորոշումների համապատասխան՝ մշակում ե բջջի աշխատանքի կոնկրետ պլանը՝ հաշվի առնելով իր կոլխոզի, ձեռնարկի, գյուղի, հիմնարկի առանձնահատկությունները. այդ պլանը ներկայացնում ե ընդհանուր ժողովի հաստատմանը. կազմում ե բջջի ընդհանուր ժողովի որակարգը, նշում ե զեկուցողներին և պատրաստում ե նյութերն ու անհրաժեշտ առաջարկները. հրավիրում ե բջջային ակտիվ այն հարցերի վերաբերմայմբ, վորոնք նախնական նախապատրաստություն են պահանջում. մասնակցում ե կոլխոզի և գյուղի հերթական ընդհանուր ժողովների որակարգի նախապատրաստմանը. նախնապատրաստում ե բջջի անդամների առաջ քաշումը կուսակցական, պրոֆմիութենական, խորհրդային և այլ հասարակական աշխատանքների համար:

Իր աշխատանքի մասին բյուրոն հաշիվ ե տալիս 2-3 ամիսը մեկ անգամից վոչ պակաս թջի ընդհանուր ժողովին, նույնական և վերջինիս հաստատմանն ե ներկայացնում իր՝ փորոշումներից կարևորագույնները:

9. Քարտուղարը պիտի ունենա մի տարգա կուսատաժից վոչ պակաս: Բացառություն թույլատրվում ե միայն ռայկոմի սամկցիայով:

Քարտուղարը զեկավարում ե բյուրոյի ամենորյա աշխատանքը, նախապատրաստում ե որակարգը, նրավիրում ե բյուրոյի նիստերը և իրականացնում ե թջի կապը կուսակցական կոմիտեյի հետ: Իր աշխատանքի մասին քարտուղարը հաշիվ ե տալիս թջի բյուրոյին:

10. Թջին իր աշխատանքը տանում ե ռայկոմի զեկավարությամբ, կանոնավոր կերպով հաշիվ տալով նրան: Ռայկոմի փորոշումները թջի համար պարագիր են: Թջին իրավունք ունի ռայկոմի փորոշումները բողոքարկելու վերադաս կուսակոմիտեյին, միաժամանակ դրա մասին հազորդելով ռայկոմին և չկանգնեցնելով բողոքարկած փորոշման կատարումը:

Կախողային բջջի հիմնական անելիքները

11. Յենելով կուսակցության հիմնական գուծից, փորն ուղղած ե յերկրի ինդուստրացմանը և գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցմանը, թջին իր առաջ հետեյալ հիմնական խնդիրներն ե դնում:

ա) համախմբել կոլխոզներիներին, փորպես գյուղում կուսակցության և խորհրդային իշխա-

նության հիմնակետին, և մանավանդ կոլխոզի բատրակա-չքավորական մասին, նույնապես և անհատական չքավորների ու միջակների լայն մասսաներին՝ գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման խնդիրների շուրջը. ամրապնդել բանվոր գասակարգի, կոլխոզնիկների և գյուղական չքավորության դաշտինքը միջակ գյուղացիության հետ՝ ընդգեմ կուլակության, և ապահովել գործով իրականացումը կուլակության վորպես գասակարգի լիկվիդացիայի քաղաքականության՝ չքավորական և միջակային տնտեսությունների համատարած կուլեկտիվացման հիման վրա. ամեն կերպ ամրապնդել պրոլետարական դիկտատուրայի որգանները —խորհուրդները. Նրանց զեկավար գերն ամենամեծ չափով բարձրացնել՝ գյուղի տնտեսական ու կուլառուրական-հասարակական կյանքի սոցիալիստական վերակառուցման գործում:

բ) ամեն կերպ ամրապնդել ու ավելի զարգացնել կոլխոզները՝ արտադրությունը լավագույն կերպով կազմակերպելով, ավելի կատարելագործված գյուղատնտեսական տեխնիկա գործադրելով, աշխատանքն ուղղի կազմակերպելով և ազգիկուլտուրական միջոցառումներ արմատավորելով. կազմակերպել կոլխոզների յեկամուտների ուղիղ բաժանումը՝ աշխատանքի բարձրարտագրողականությունը խրախուսելու, համայնացրած ֆոնդերը մեծացնելու և կոլխոզնիկների նյութական ու կուլտուր-կենցազային մակարդակը բարձրացնելու հիման վրա. բարձրացնել տրնտեսության ապրանքայինությունը և ժամանակին

կատարել կոլխոզի պարտավորությունները պետության առաջ, հաղթահարել հետամնաց մանրսեփականատիրական մնացորդները կոլխոզում։ արտադրական ոգնություն հասցնել չքավորական ու միջակային անհատական տնտեսությունների բարձրացմանը և վերջիններիս սիստեմատիկ կերպով կոլխոզ գրավել՝ կամավորության հիման վրա ու գործնական փորձով ցուցադրել խոշոր համայնքած տնտեսության բոլոր առավելությունները.

Դ) համախմբել կոմունիստներին կուսակցության հիմնական գիծն իրականացնելու, նրանից արվող շեղումների գեմ ակտիվ կերպով պայքարելու շուրջ՝ լայն պրոլետարական ինքնաքննադատությունը և ներկուսակցական դեմոկրատիան ծավալելու միջոցով ու այդ հիման վրա բջջի աշխատանքին գրավել ամեն մի կոմունիստի. բարձրացնել կոմունիստների իդեյական-քաղաքական մակարդակը. պաշտպանել ու ամրապնդել լենինյան բոլշևիկյան կուստիցիալինան իր անդամների մեջ. նոր անդամներ ընդունել կուսակցության մեջ բանվորներից, բարորակներից, առաջավոր և ավելի կայուն կոլխոզներից. պատրաստել և առաջ քաշել կաղըր՝ կուսակցական, տնտեսական ու հասարակական աշխատանքների համար։

Բջջի մասնակցությունը կոլխոզի ՏԵՍԵԿԱԿԱՆ կյանքին

12. Կուսակցական բջջն ակտիվ կերպով մասնակցում ե կոլխոզի տնտեսական կյանքին,

ապահովում ե կոլխոզների ակտիվ մասնակցությունը բոլոր տնտեսական հարցերը քըննելիս, աշխատելով ամենամեծ չափով ոգտագործելու նրանց տնտեսական փորձառությունը; Բջիջը լսում է ֆրակցիաների հաշվետվությունները, հետագա աշխատանքի համար ցուցմունքներ և տալիս, խիստ հետևում ե, վորդության աշխատանքում ուղիղ կուսակցական գիծ տարվի՝ ֆրակցիայի աշխատանքին մանր-մունք հարցերում, միջամտություն չթույլատրելով։

13. Բջիջն իր աշխատանքում ձգտում է իրականացնել. — ամեն մի կոմունիստի ակտիվ մասնակցությունը կոլխոզի հիմնական տնտեսական խնդիրների կատարմանը. ընդունված կանոնադրության ճշտիվ կատարումը. կոլխոզի կազմակերպչական - տնտեսական պլանի ժամանակին կազմելն ու իրագործելը. արտադրության մեջ աշխատանքի ուղիղ կազմակերպումը. արտադրության միջոցների ավելի լրիվ ոգտագործումը. կոլխոզային ինվենտարին խնամքով վերաբերվելը. աշխատանքի արտադրողականության և աշխատանքային դիսցիպլինայի ամեն կերպ բարձրացնելը. սվաջության, անհոգության, անփութության տարրերի վերացումը. հերթական տընտեսական կամուլանիաների (ցանքս, հունձ, ցել և այլն) ուղիղ կազմակերպումը. արտադրանքի ինքնարժեքի իջեցումը և անտեսության ապրանքայնության բարձրացումը. կոլխոզի տեխնիկական բազայի լայնացման համար միջոցների կուտակումը. պարմանագրերի և պարտավորությունների ժամանակին կատարումը՝ կոռպերատիվ և

պետական կազմակերպություններին ամսդեպ. նյութական հաշվեառի ու հաշվեառփության ուղիղ գնելը. ազատվող բանվորական ուժի ուղիղ ոգտագործումը՝ կոլխոզից դուրս արվող աշխատանքների համար (կառուցումներ, հանքեր և այլն). չքավորական ու միջակային անհատական անտեսություններին արտադրական ոգնություն կազմակերպելը. բջիջի բոլոր անդամների, կոմյերի անկուսակցական ակտիվի մասնակցությունն ազգումնիմումն և ուրիշ ազգումիջոցները անհատական անտեսությունների վրա տարածելու պրոպագանդային:

14. Բջիջն աշխատանք ե տանում ակտիվ կոլխոզնիկների կազմից անտեսական կագրեր պատրաստելու և գաստիարակելու համար, ապահովելով բատրակա-չքավորական տարրերի պոաջքաշումը.

ա) Բջիջը ջոկում ե առելի ակտիվ և ընդունակ կոլխոզնիկներին՝ թե կուսակցական և թե անկուսակցական՝ կոլխոզի գեկավար աշխատանքին՝ նրանց առաջ քաշումն իրականացնելով կոլխոզային հաւարակայնության միջոցով. աշխատանքի մեջ նրանց մշտական ոգնություն ե ցույց տալիս և կազմակերպում ե նրանց սիստեմատիկ պատրաստումն ու վերապատրաստումը՝ դասընթացների, խմբակների, խորհրդակցությունների, գյուղատնտեսական և այլ տեխնիկումներ, բարձրագույն գլոբոցներ ուղարկելու միջոցով և այլն.

բ) ոգնում ե մասնագետներին ուղիղ ոգտագործելուն և նրանց համար անհրաժեշտ պայմաններ ու աջակցություն ե ստեղծում, կազ-

մակերպելով սիստեմատիկ ոգնություն և հանարակական վելահսկողություն նրանց աշխատանքի նկատմամբ։

15. Բջիջն ապահովում ե կոլխոզային մասների ակտիվության լայն ծավալումը, կազմակերպում ե սոցիալիստական մբցությունն, հարվածայնությունն, կոլխոզնիկներին գրավում ե արտադրական խորհրդակցությունների աշխատանքներին։

Բջիջն ապահովում ե կոլխոզնիկների ակտիվ մասնակցությունը բոլոր համակոլխոզայինների (անտեսական, կուսակուր-կենցաղային և այլն) մշակմանը, քննարկմանը և լուծմանը. կազմակերպում ե վարչության սիստեմատիկ հաշվետվությունը՝ կոլխոզնիկներին, աշխատում ե իրականացնել կոլխոզնիկ-միջակների ակտիվ մասնակցությունը կոլխոզի կյանքին։

Աշխատանքը մասսաների մեջ

16. Բջիջի կարևորագույն ու հիմնական անելիքն ե մշտական կապ պահպանել անկուսակցական մասսայի հետ, նրան կազմակերպել և կուսակցական աղդեցությունը նրա վրա տարածելը. Անհատականների չքավորա-միջակային մասամների վրա աղդեցություն հիմնական տարածողները հանդիսանում են կոլխոզնիկները, վորպես կուսակցության և խորհրդային իշխանության հիմնական հենարանը գյուղում, և անկուսակցական բանվորական, բարբակային, չքավորական, միջակային ակտիվը, վորոնք համախմբվում են կուսակցության, խորհրդագների, պրոֆմիություն-

ների, կոռակերացիայի և մյուս կազմակերպությունների շուրջ:

17. Բջիջն իր ամբողջ աշխատանքը մասսաներում կառուցում է ընդհանուր կուսակցական վորոշումների հիման վրա՝ հաշվի առնելով անկուսակցական մասսաների տրամադրությունները և պահանջները: Միստեմատիկ բացատրական ու դաստիարակչական աշխատանքով հաղթահարելով մանր-բուրժուական տրամադրությունները և տեղականության բնույթ կրող պահանջները, սոցշինարարության ընդհանուր շահերի գիտակցությունը դաստիարակելով մասսաներում՝ բջիջը կազմակերպում է կուսակցական լոգունդների և փորոշումների աջակցումն ու իրագործումը՝ լայն անկուսակցական մասսաների կողմից:

18. Բջջի գարեւորագույն ինդիքներից մեկն է հանգիսանում կոլխոզային ակտիվի լայն կաղըբեր ստեղծելն ու դաստիարակությունը, նույնպես և բարակներից, անհատական չքափորներից ու միջակներից ակտիվ ստեղծելը:

Կոլխոզներում անհրաժեշտ է ակտիվ կազմակերպել, առաջին հերթին, արտադրական խորհրդակցությունների շուրջը՝ համակոլխոզային, հողամասային և այլն, ակտիվիստ-կոլխոզներից աճեցնելով կոլխոզային շարժման գաղափարներն անցկացնող պրակտիկ ազիտատորներ,—կազմակերպելով նրանց յերթն ուրիշ գյուղեր ու կոլխոզներ՝ իրենց կոլխոզի կոնկրետ նվաճումները և տնտեսական հաջողությունները լայնորեն ժողովրդականացնելու համար:

19. Անկուսակցական ակտիվը՝ կուսակցության շուրջը համախմբելու նպատակով՝ բջիջը պարբերաբար գումարում է բաց ժողովներ, այնտեղ գրավելով կոլխոզներին ու անհատական բարարակներին, չքափորներին, միջակներին, նըրանցից ակտիվներին քաշելով քաղզրագիտության խմբակներն ու դպրոցները, աջակցում է, վոր կուսակցության ավելի մոտիկ կանգնածներն առաջ քաշվեն պատասխանատու աշխատանքի թե կոլխոզում և թե կոլխոզից դուրս: Բջիջը ջոկում է իր միջից բավականաչափ պատրաստված ընկերների՝ անկուսակցականների հետ անհատական կապ հաստատելու համար: Բջջի աղեցության սահմաններում գտնվող վոչ կուսակցական որդաններ կազմակերպելիս՝ կոլխոզների վարչություններ, խորհուրդներ, կոոպերատիվ ու պրոֆորդաններ և այլն ընտրելիս՝ բջիջն իր անդամներին առաջ քաշելու հետ միասին առաջ է քաշում նաև կուսակցությանը մոտ կանգնած, մասսաների մեջ հեղինակություն ունեցող անկուսակցականներին: Անկուսակցականներից լավագույններին բջիջն աշխատում է գրավել կուսակցության մեջ:

20. Անհատական անտեսություն վարող չքափորա-միջակային մասսաների մեջ բջիջը մասսայական աշխատանք է տանում, նրանց կազմակերպչական-տնտեսական ոգնություն է ցույց տալիս, ապահովում է նրանց մասնակցությունը խորհուրդների կազմում, կոոպերացիայի որդաններում և մյուս հասարակական կազմակերպություններում, գրավում է նրանց կոլխոզի հա-

սարակական կյանքի—արտադրական խորհրդակցության մասնակցությունը,—և խոշոր կոլեկտիվ տնտեսության առավելությունը ցուցադրելու հիման վրա՝ նրանցից քաշում և կոլխոզի կազմի մեջ։ Դրա հետ միասին՝ բջիջը ղեկավարում և ակտիվ մասնակցում ե բոլոր հերթական կամպանիաներին՝ պայմանագրման, ցանքսային, տուրքային, հացամթերման և այլն։

21. Բջիջը քաղաքական-դաստիարակչական և կուլտուրական աշխատանք և տանում կովողների ու անհատականների մեջ՝ ոգնելով նըրանց վերջ տալու մանր-սեփականատիրական հոգեբանությանն ու ազգային խարությանը և վերադաստիարակում և նրանց կոլեկտիվիցմի ու ինտերնացիոնալիզմի վորով։


Բջիջն աշխատանք և տանում անդրագիտության վերացման համար և ապահովում ե յերեխաների ընդհանուր ուսուցման մասին խորհրդային իշխանության դիրեկտիվի իրագործումը, աջակցում ե բնակչության մեջ ագրի-կուլտուրական գիտելիքների տարածմանը, տանում և հակակրննական պրոպագանդա։ Այդ բոլոր աշխատանքը բջիջն իրագործում ե խրճիթ-ընթերցարանների, պատի թերթերի, դպրոցական խորհուրդների, գյուղխորհրդի սեկցիաների միջոցով, այդ գործին քաշելով գյուղի կուլտուրական ուժերը, առաջին հերթին ուսուցիչներին, գյուղատնտեսներին և այլն, ամեն կերպ զարգացնելով ու կազմակերպելով կոլխոզնիկների նախաձեռնությունը և ակտիվությունը՝ կուլտուրական շինարարության գործում։ Բջիջն ամեն կերպ

աջակցում է մասսաների մեջ տարածելու լրագիրների, ժուրնալների բաժանորդագրությունն ու բանալուղթղթակիցների ցանցը լայնացնելու և վերջիններիս մեջ դաստիարակչական աշխատանք և տանում։

22. Բջիջը մասսայական աշխատանք և տանում թե կոլխոզում յեղած և թե կոլխոզից դուրս գտնվող կանանց մեջ, ձգտելով գեղջկուհիների հիմնական մասսան գրավելու գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման ակտիվ մասնակցությանը։ Այդ նպատակով բջիջը կանանց մեջ տարիվող աշխատանքին և քաշում թե կոմունիստներին և թե անկուսակցական ակտիվիստներին, ապահովում և գյուղի կանանց պատվիրակուհիների ժողովների աշխատանքը, կանանց մեջ անց ե կացնում մրցությունն ու հարգածայնությունը, ստեղծում և զանազան խմբակներ, կանանց գրավում ե կոլխոզի տնտեսական աշխատանքին, խորհրդի և այլ հասարակական կաղմակերպությունների աշխատանքին։

Բջիջը նախաձեռնություն ե ցույց տալիս մանկամասուրներ, մանկապարտեկներ, հասարակական սննունդ կազմակերպելուն։ հետեւմ ե կանանց աշխատանքի պաշտպանության պայմանների իրագործմանը։ նրանց մեջ անդրագիտության վերացման աշխատանքն ե տանում։

23. Յերիտասարդության մեջ ամբողջ աշխատանքը բջիջն անց ե կացնում կոմյերիտական կազմակերպության միջոցով։ Կոմյերիտմիւթյանը ղեկավարելիս բջիջն առանձին ուշագրություն և դարձնում կոմյերիտմիության բջիջի աշխատան-



քի հասարակական - քաղաքական բովանդակությանը, նրա մարքսիստական-լենինյան դաստիարակությանը, միության աճումը կանոնավորելու հարցերին, աղջիկներին կոմյերիտմիության մեջ գրավելուն, միության մեջ կուսակցական միջուկի մեծացմանը: Բջիջը պիտի աշխատի, վոր կոմյերիտականները կոլխոզն ամրապնդելու կարեռագույն միջոցառումների նախաձեռնողներ հանդիսանան, արտադրության մեջ կարգապահության որինակ, վոր յերիտասարդությունն ամենամեծ չափով քաշվի կոլխոզային ակտիվ շինարարությանը և գյուղի բոլոր խնդիրների իրադրությանը:

24. Բջիջը թե իր անդամներին և թե անկուսակցականներին խորհրդային շինարարության-ե գրափում խորհուրդների սեկցիաների միջոցով, նրանց կոոպերացիայի և այլ հասարակական կազմակերպությունների մեջն և քաշում: Աշխատանք և տանում պետական, կոոպերատիվ և առևտրական ապարատները լավացնելու, նրանց մեջ բյուրոկրատիզմի և չարգործությունների դեմ կռվելու համար:

25. Բջիջը՝ գյուղական պրոֆկազմակերպությունների հետ միասին՝ ապահովում և կոլխոզի կապի ուժեղացումը ֆաբրիկների ու գործարանների, առաջին հերթին շեֆական ձեռնարկների բանվորական մասսաների հետ, ամեն կերպ աջակցելով շեֆային աշխատանքին, գյուղական տեսության հետ կապված բանվորներին ոգտագործելով, կոլխոզիկներին ձեռնարկներն ուղարկելով և այլն:

26. Կոլխոզային բջիջներն այն հիմնական կուսակցական կազմակերպություններն են հանդիսանում, վորոնք գործնականում մասսայական քաղաքական աշխատանք են տանում չքավորների մեջ թե կոլխոզներում և թե չքավոր անհատականների մեջ:

Ծանոթություն. Չքավորների մեջ տարրող աշխատանքի ձեռքը գորոշում են կենտրոնի հատուկ վորոշումով:

Ներկուսակցական աշխատանիք

27. Բջիջը սիստեմատիկ կերպով աշխատանք է տանում կուսակցության մեջ նոր անգամներ լնդունելու բանվորներից, բարբակներից և առաջափոր կոլխոզիկներից, վորոնք նախաձեռնություն են ցույց տվել կոլխոզներ կազմակերպելում և ամրապնդելում, ակտիվություն և տուկունություն - կուլակության դեմ մղվող պայքարում, մանր բուրժուական տեսդենցների դեմ կրիվ են տանում և ստուգված են ակտիվ աշխատանքում՝ գյուղում ընթացիկ տնտեսական կամպանիաներն անց կացնելիս:

Բջիջը հետևում է, վոր թեկնածուները ժամանակին փոխադրվեն կուսակցության խականանդամության և ուշադրությունը կենտրոնացնում է նրանց կուսակցական-քաղաքական դատիրակության վրա:

28. Բջիջն ակտիվ մասնակցություն է ցույց տալիս թե տեղական և թե համակուսակցական համագումարների, կոնֆերանսների, խորհրդակցությունների որակարգի բոլոր հարցերի քննար-

կությունը, նույնպես և այն հարցերի քննարկությունը, վորոնք իր նախաձեռնությամբ առաջարկում են կուսորգանների քննությանը:

Բջիջն ուսումնասիրում ե և կյանքի մեջ անց կացնում կուսհամագումարների, կոնֆերանսների վորոշումները և բարձր կուսորգանների դիրեկտիվները, նույնպես և աջակցում ե խորհրդային իշխանության դիրեկտիվների իրականացմանը:

29. Բջիջն իր աշխատանքը կառուցում ե պրոլետարական ինքնաքննադատության և ներկուսակցական դեմոկրատիայի լայն ծավալման հիման վրա, կուսակցության բոլոր անդամներին դրավում ե ակտիվ կուսակցական աշխատանքի և ապահովում ե կուսակցության ամեն մի անդամի կազմից նախաձեռնության ու ինքնազործունեյության ամենամեծ չափով յերեան բերելուն:

Իր ուժերը բաշխելիս բջիջն աշխատում ե կուսակցական ազգեցությունն ամենալրիվ կերպով տարածել անկուսակցական կոլխոզներների վրա՝ թե արտադրության մեջ (հողամասեր, բրիգադներ) և թե կոլխոզի ամերող հասարակական քաղաքական կյանքում ու գյուղի հասարակական կազմակերպությունների աշխատանքում (խորհուրդ, կոոպերացիա և այլն):

Բջիջը վերահսկողություն է կազմակերպում, թե կոմունիստներն ինչպես են տանում իրենց կուսակցական պարտականությունները (արտադրությունում կոմունիստների որինակելի լինե-

լը, կուսակցական ժողովներին հաճախելը, անդամագնական վճարումը, կուսակցական վորոշումների ակտիվ կերպով անց կացնելն անկուսակցականների մեջ և այլն), պրակտիկայի մեջ մացնելով առանձին կոմունիստների հաշվետվությունները լսելը՝ իրենց կուսակցական պարտականությունների կատարման մասին:

30. Բջիջը պահանջում է կուսակցության անդամներից և թեկնածուներից՝ արտադրական պարտականությունների որինակելի և կարգապահ կատարումը, ակտիվ մասնակցություն սոցմրցմանը, հարվածայնությանը, արտադրական խորհրդակցությունների աշխատանքին, նախաձեռնության ցուցադրում կոլխոզային կյանքի տնտեսական թերությունները վերացնելու գործում: Բջիջն աշխատում է; վոր կոմունիստներն որինակ լինեն անկուսակցական կոլխոզների համար, կոմունիստների կողմից արտադրական պարտականությունների խախտումը համարելով վորպես կուսակցական դիսցիպլինայի խախտում:

Բջիջը՝ կուսակցության անդամներին և թեկնածուներին մարքսիստական-լենինյան դաստիարակություն տալու և նրանց կուլտուրական-քաղաքական մակարդակը բացրացնելու նպատակով՝ կազմակերպում է քաղաքագիտության գպրոցներ, մարքսիստական խմբակներ, նույնպես և գյուղական տնտեսության վերակառուցման կազմակերպչական—տեխնիկական ու գյուղատնտեսական հիմնական հարցերի ուսումնասիրություններ, կազմակերպում:

Վ.ոչ կուսակցական կազմակերպությունների
աշխատանքի դեկավառումը

31. Վոչ կուսակցական կազմակերպությունների վրա կուսակցական ազգեցությունը բջիջն իրագործում է ֆրակցիաներ կազմակերպելով կոլխոզին, գյուղական գյուղին, կոոպերատիվին, ՓՈԿ ին, կամավոր ընկերություններին և այլ ընտրական որգաններին կից, կամ այդ կազմակերպություններում աշխատող առանձին կոմունիստների միջոցով։ Ֆրակցիաներն աշխատում են բջիջեկավարությամբ և վերջինս վորոշումները նրանց համար պարտադիր են։ Բջիջն ամեն կերպ աշխատում է ֆրակցիաների աշխատանքն աշխուժացնել և ուղիղ դնել։ Բջիջը պարբերաբր լսում է ֆրակցիաների կամ վոչ կուսակցական որգաններում աշխատող առանձին կոմունիստների հաշվետու գեկուցումները, նույնպես և քննարկում է ֆրակցիայի աշխատանքի կարեւորագույն հարցերը, նրանց մասին վորոշումներ և հանում՝ չմիջամտելով կոլխոզների վարչությունների և ֆրակցիաների ամենորյա գործառնական աշխատանքին։ Բջիջը ստուգում է ֆրակցիաների կողմից կուսակցական վորոշումների իրագործումը։

32. Բջիջն՝ իրականացնելով վոչ կուսակցական կազմակերպությունների դեկավարությունը՝ աշխատում է ամեն կերպ բարձրացնել նըրանց, մանափանդ գյուղական գյուղական գյուղական շինարարության ինդիբները լուծելիս և տնտեսական-քաղաքական կամպանիաները տանելիս։

Կուսակցական խնդիրները

33. Կուսակցակերպությամբ՝ իր խմբակի բոլոր կոմունիստներին զեկավարում է, բաժանում է նրանց մեջ կուսակցական աշխատանքը, կազմակերպում է հարվածայնությունը, սոցմքումը, գրավում է կոլխոզներին և կոլտնտեսունիներին արտադրական խորհրդակցությունների աշխատանքներին. կազմակերպում է իր խմբակի կոմունիստներին, կոմյերիտականներին և անկուսակցականներին կատարելու այն բոլոր անելիքները, վորդրված են բջիջ առաջ, և առաջին հերթին արտադրական ինդիբները. տանում է կուսակցության նոր անդամների ընդունելությունը, գրավում է անկուսակցականներին կոլխոզի ընդհանուր ժողովներին և կուսակցական բաց ժողովներին. ուշադրությամբ ուսումնասիրում է կոլխոզների տրամադրությունները և բացարում է նրանց կուսակցության հիմնական քաղաքական լինդիբները. կազմակերպում է լրացրերի ընթերցում, կոլխոզների զբույցներ, սադիո-ունկնդրություն. հետեւում է կուսդիսցիպլինային (անդամավճարների վճարում, ժողովների հաճախում, առաջադրությունների կատարում և այլն)։

ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՈՒՍԲԶԻՉՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՎԱԾՔԻ
ՎԵՐԱԿԱՌՈՒՅՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Գյուղի բոլոր պայմանների և սոցիալական կառուցվածքի փոփոխությունը ներկա մոմենտում անհրաժեշտ է գարձնում գյուղի կուսակցական բջիջների կազմակերպչական կառուցվածքի վերակառուցումը։ Կոլխոզային և գյուղական բջիջները գյուղում, վորպես գյուղի ամբողջ տրնտեսական քաղաքական կյանքի ղեկավար միավորներ, պետք է վորքան կարելի ելավ ու արագ կառուցեն իրենց ամբողջ աշխատանքը, փոփոխելով կազմակերպչական և մասսայական աշխատանքի մեթոդները, մյուս կազմակերպությունները ղեկավարելու մեթոդները՝ տվյալ պայմաններից և 16-րդ կուսամագումարի վորոշումներից բղասող հիմնական ինդիրներն իրականացնելու տեսակետոց։

Սակայն, յեթե դիտենք մեր—Ազրբեջանի կոլխոզային և գյուղական բջիջների աշխատանքը, կարող ենք ասել, վոր նրանց կառուցվածքում և աշխատանքի մեթոդներում հնի մնացորդների գեռ շատ ամուր են մնում, վորովհետեւ գյուղական կուսակցական կազմակերպությունները հիմնականում չեն վերակառուցել իրենց աշխատանքի մեթոդները այն հիմնական

խնդիրների շուրջը, վորոնք ներկայումս դրված են գյուղի առաջ։ Փյուղական բջիջների աշխատանքի գլխավոր և ելական թերություններից մեկն այն ե, վոր կուսակցական-մասսայական աշխատանքը առաջանաւ առաջանաւմ և մեծ բացերով։ Կարելի ե զեռ շատ բջիջների հանդիպել, ուր ամբողջ բջջին աշխատանքը տանում ե միայն քարտուղարը, իսկ բջջի մյուս անդամները՝ բացի բջջի ժողովներին հաճախելուց՝ վորչինչ չեն անում։

Ներկա պայմաններում այդպիսի գրությունը միանգամայն անթուլյատրելի ե։ Անհրաժեշտ է կոլխոզային և գյուղական բջիջների կազմակերպչական կառուցվածքը վերակառուցել այնպես, վոր բոլոր կոմունիստներին ամբողջապես քաշենք բջջի կուսակցական-մասսայական աշխատանքին։ պետք է վերակառուցել բջիջների աշխատանքը արտադրական ցուցանիշի համաձայն, կոլխոզային և գյուղական բջիջները գարձնելով արտադրական, ղեկավար, կազմակերպչական ուժ։ Այդ տեսակետով ել առաջարկվում է վերակառուցել կոլխոզային և գյուղական բջիջների կազմակերպչական կառուցվածքը՝ սրան կցված ուրվագծի համաձայն։

Բջջի աշխատանքը բաժանվում է չորս մասին Առաջին՝ կազմակերպչական աշխատանքի մաս։

Զբաղվում ե՝ կուսակցության աճման, ուեզերվեր պատրաստելու, դիրեկտիվների, բջջի վորոշումների կատարման ստուգման հարցերով, կուսակցության դիսցիլինային, անդամագնարների վճարմանն և հետեւում, ղեկավարում և կուսակցմակերպիչների աշխատանքը։

Յեթե բջիջը մեծ է, հանձնարարվում է այդ
մասում 2 կազմակերպիչ նշանակել՝

ա) կուսարտականությունների կատարու-
մը, կուսդիցիպիլինան և անդամավճարների վը-
ճարումն ստուգող կազմակերպիչը.

բ) կուսակցության մեջ ընդունելու և ռե-
գերժեր պատրաստելու գործի կազմակերպիչը.

Յերկրորդ՝ ագիտասասայական աշխատանքի
մաս.

Դեկավարում ե զյուղի ամբողջ ագիտաս-
սայական աշխատանքը, կինաշխատանքը, կազ-
մակերպում ե հարվածայնությունը և սոցմքու-
մը, արտադրական խորհրդակցությունները, կազ-
մակերպում ե չքափորների խմբակ, չքափորների
մեջ աշխատանքե տանում, զեկավարում ե բատ-
րակների մեջ տարգող աշխատանքը, կազմակեր-
պում. ե կամավոր ընկերություններ (ՈՍՈ-Ավիո-
քիմ, ՄՈՊՐ և այլն), զեկավարում ե տարգող
տնտեսական-քաղաքական կամանիաները (գար-
նանային և աշնանային ցանքսային կամպանիա-
ներ, մթերութիներ, գյուղական բնակչությունից
միջոցներ հավաքելը՝ գյուղատնտեսական տուրք,
ջրային տուրք, ապառիկներ, փոխառություն և
այլն), աշխատանք ե տանում կանանց մեջ, կո-
մունիստների և կոմյերիտների խորհրդակցու-
թյուններ, զեկավարում ե պատվիրակային ժո-
ղովները, կանանց ակտիվի ժողովները, աշխա-
տանք կոլտնտեսութիների մեջ, նրանց արտա-
դրական խորհրդակցությունների գրավելը: Կազ-
մակերպում ե մանկական մսուրներ ու հրապա-
րակներ և այլն:

Այդ մասում ել հանձնարարվում ե նշանակ-
կել 3 կազմակերպիչ՝

ա) չքափորների և բատրակների մեջ տար-
վող աշխատանքի կազմակերպիչ.

բ) կինաշխատանքի կազմակերպիչ.

գ) մասսայական կամպանիաների, մամուլի
տարածման և կամավոր կազմակերպություննե-
րը ղեկավարող կազմակերպիչ:

Յերրորդ՝ կուտարովածիսանի մաս.

Տանում ե կուսակցական և կոմյերիտական
ուսումունքը, կազմակերպում ե խմբակներ, զե-
կավարում ե պատիթերթերի աշխատանքը, գյուղ-
թղթակցային շարժումը, կազմակերպում ե ան-
գրագիտության վերացման կետեր, զեկավարում
ե գյուղական գլորոցների, խրճիթ-ընթերցարան-
ների աշխատանքը, տանում ե ագրո-պրոֆարո-
պագանը, զբաղվում ե գաստիարակչական աշ-
խատանքով՝ Ազգիկոմկուսի (բ) անդամների և կոմ-
յերիտականների մեջ:

Այդ մասում հանձնարարվում ե նշանակել
նույնպես 3 կազմակերպիչ՝

ա) կուսակցական-կոմյերիտական կրթության
կազմակերպիչ.

բ) մամուլի կազմակերպիչ և գյուղթղթակ-
ցային շարժման զեկավար.

գ) ժողովրդական կրթության և ագրո-պրոֆ-
արոպագանդայի կազմակերպիչ:

Չորրորդ՝ հաւելեանի յել կադրերի առաջ
նաւման մաս:

Զբաղվում ե զյուղի խորհրդային, կոոպերա-
տիվ, վարչական, տեխնիկական և այլ գորակյալ

կաղբերի հաշվեառով ու առաջ քաշումով, իրագործում ե նրանց պատրաստումը և վերապատրաստումը: (Այդ մասում անհրաժեշտություն չկա կազմակերպիչներ նշանակելու և ամբողջ աշխատանքը տանում և մասի ղեկավարը):

Մասերի դեկավաների յեվ մասսային կազմակերպիչների աշխատանքի մերողների մասին

Կուռակցական աշխատանքի ամեն մի մասը (սեկտորը) գլխավորելու համար ջոկվում և բջջիքյուրի անդամներից մեկը կամ նրան հավասարազոր գործիչ: Մասերը (սեկտորները) իրենց աշխատանքը տանում են աշխատանքի բջիջային 3 ամսյա պլանի հիման վրա, վոր կազմում և բյուրոն՝ մասերի ղեկավարների մասնակցությամբ: Իսկ մասերի ղեկավարները՝ բյուրոյի պլանի հիման վրա՝ իրենց մասի գծով մշակում նիջոցառումները և աշխատանքը բաժանում են իրենց մասային կազմակերպիչների ու բջջի առանձին անդամների միջև, բյուրոյի պլանը հասցնելով կուսակցության ամեն մի անդամին:

Իրենց մասերի հարցերի վերաբերմամբ մասերի ղեկավարները հրավիրում են իրենց կազմակերպիչների և բջջի իրենց ճյուղում աշխատող առանձին անդամների պարբերական խորհրդակցություններ, քնարկում են առանձին հարցեր՝ մասերի աշխատանքի պլանը, առանձին կազմակերպիչների աշխատանքն ու հաշվետվությունները և այլն, որինակ՝ կուրսարուաշխատանքի մասը իր խորհրդակցությունում քննում ե պատի թերթի աշխատանքի դրությունը, կամ

թե ազիտմասսայական աշխատանքի մասը, քըննում ե արտադրական խորհրդակցությունների աշխատանքի հարցերը, այս կամ այն մասսայական կամ պանիան անցկացնելու միջոցառումները և այլն:

Սկզբունքով անհրաժեշտ և այնպէս անել, վոր բջջի բոլոր կոմունիստները մասնակցեն կուսակցական-մասսայական աշխատանքին և դրվեն գյուղի, կոլխոզի ու գյուղի բջջի առանձին ճյուղերի կարեորագույն մասերի աշխատանքներում: Բացի դրանից, կոլխոզային և գյուղական բջիջներում՝ ամբողջ կուսակցական մասսան բջիջնետ կապելու համար՝ ֆաբրիկա-գործարանային ուայոնների որինակով՝ անհրաժեշտ ե ջոկել բրիգադների, աշխատանքի առանձին մասերի, կըվարատաների (կոլխոզներում) կուսկազմակերպիչներ, գյուղական բջիջներում կուսկազմակերպիչներ պիտի ջոկել՝ առանձին ճյուղերի կոմունիստների խմբակները միացնելու (այստեղ, ուր բջիջը միացնում ե մի քանի փոքրիկ շեներ), մեծ գյուղերում ըստ կվարտաների և այդ կուսորգանների միջոցով անհրաժեշտ և աշխատանքանելով կոմունիստների առանձին խմբակների մեջ:

Յեխելով կոլխոզային և գյուղական բջիջների կազմակերպչական կառուցվածքից, վոր տըրպաված և սույն ուրվագծում, ույլիոնները պետք ե ամենամոտ ժամանակում կազմակերպեն մի շարք կարճ ժամանակյա կուրսեր-սեմինարներ՝ ստորին կուսակտիվը պատրաստելու և վերապատրաստելու համար, ամբողջ դասընթացը հատկա-

պես նվիրելով աշխատանքը նոր ձևերով և մեթոդներով վեբակառուցելու հարցերին։ Ամբողջ կուսակտիվը միանգամից աշխատանքից չկարելու համար, ուսյոնական կուրսերում նրան պիտի սովորեցնել հերթով՝ նախ կուսակցական-կազմակերպչական աշխատանքի մասերի զեկավարներին, կազմակերպիչների հետ միասին, ապա ագիտմասսայական աշխատանքի ղեկավարներին և այդ կարգով՝ բոլոր մասերի գծով։

Դրա հետ միասին՝ ուսյոնական պետք և ուսյոնական կուսակտիվից ընկերներ ջոկեն իբրև բջիջների արտաշտատային հրահանգիչներ։ Դա հարկավոր է, մանավանդ, ներկայումս, քանի փոր առայժմ ուսյոնական պետք շատ թույլ հրահանգչական կազմ ունեն, քանի փոր բջիջն պիտի հետ սովորեցնել աշխատանքի կամպանիական ձեռփոյ, անհեռանկար աշխատանքից, սովորեցնել նրան սիստեմատիկ կերպով և պլանով աշխատանքի։

Արքիոմկուսի (բ) Կենտկումի կուսակիմարարության սեկտոր

ՎԵԿԱՊԵ-Ի (Բ) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՎՈՐՈՇՈՒԽԾԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՃՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ - 1930 ԹՎԻՆ

1) 1930 թվի ընթացքում կուսակցության շաբերն և մտել ավելի քան 650 հազար հոգի՝ արտադրական բանվորներ։ Անցյալ տարի կուսակցության կազմն ամրապնդվել ե գլխավորապես արդյունաբերության հիմնական ճյուղերի խոշոր ձեռնարկների (մետաղ, քարածուխ, նավթ) կադրային բանվորների հաշվին։

Եշանավոր չափերով աճել են գյուղական կազմակերպությունները, գործնք անցյալ տարի մեծացել են 54 տոկոսով՝ գյուղատնտեսական բանվորների, բատրակների ու կոլլագնիկների հաշվին։

Կենտրոնական կոմիտեն բավարար և համարում կուսակցության 1930 թվի աճման արդյունքները և համապատասխան սոցիալիստական շինարարության ու կուսակցության խնդիրներին՝ ներկա ետապում։

Դրա հետ միասին կենտրոնական կոմիտեն մատնանշում է, այսուամենայնիվ կուսակցության աճման թափն այն աստիճան չի ապահովվել արտադրությունից վերցրված բանվորներով, փոր լիովին կատարվեր կենտկոմի քանիցս տված դիրեկտիվներն այն մասին, թե կուսակցությու-

նում՝ աբտադրությունից վերցրած բանվորների տոկոսը պիտի հասցնել 50-ի:

Հնգամյակի յերրորդ—վճռական տարվա սկզբին բանվոր դասակարգի ու գյուղացիական քաղաքական ակտիվության նոր վերելքը (խորհուրդների վերընարությունների առթիվ և լենինյան որերին մասսայական հոսանքով կուսակցության շարքերը մանելու հետևանքով), կուսակազմակերպությունների առաջ խնդիր և դնում դրուխ անցնել մասսաների այդ աճող ակտիվությունն ու ամրապնդել և բանվոր դասակարգի յավագույն մասի ու ագաջավոր կոլխոզների կուսակցության շարքերը մանելու ահազին հոսանքն ընդորկել:

Յենելով ակտիվիտ հարվածայիններին կուսակցության շարքերը քաշելու աշխատանքը ձափալելու միջոցով հետաքայում բանվորական կորբու կուսակցության մեջ ամրապնդելու խնդրից, Կենտրոնական կոմիտեն մատնանշում ե, վոր կուսակցության համար անդամներ ընդունելը պետք ե տմենասերտ կերպով կապված լինի սոցիալիստական շինարարության բոլշեվիկյան տեմպերի համար տարվող պայքարի, ժողովրդա-տնտեսական պլանը 1931 թվին կատարելու ու գերակատարելու համար բանվորական մասսաների հետագա մոբիլիզացիայի հետ:

2) Կուսակցության համար անդամագրումն ուժեղացնելով բոլոր խոշոր ձեռնարկություններում, մետաղագործական ու քարածուխային ձյուղերում՝ այնտեղ կուսակցական խավի անշեղ բարձրացումն ապահովել:

Կենտրոնական կոմիտեն բավարար չի համարում յեղած կուսակցական խավը արդյունաբերության լեռնա-հանքային ձյուղում (8,8 տոկ.), տեքստիլ ճյուղում (13,8 տոկ.), փայտամշակման ճյուղում (10,9 տոկ.), և թղթի ճյուղում (11,7 տոկ.), և առաջարկում ե Ուկրայնայի կոմկուսի (բ) կենտրոնական կոմիտեին, ՎեկԱՊԵ-ՊԵ-ի (բ) Անդրկովկասյան, Արևմտյան Սիբիրի, Կազակատանի, Նիժեգորոդյան և Հյուսիսային յերկրային կոմիտեներին, ՎեկԱՊԵ-ի (բ) Մոսկվայի, Իվանովսկու, Արևմտյան և Ուրալի շրջկոմներին և Բելգուսիայի կոմկուսի (բ) կենտրոնական կոմիտեյին՝ արդյունաբերական այդ ձյուղերում ուժեղացնել անդամագրությունը՝ կուսակցության շարքերն ընդունելու համար:

Կենտրոնական կոմիտեն կարևորագույն խընդիր է համարում նոր կառուցումներում ու ձեռնարկություններում, մասնավանդ այնտեղ, վոր մոտ ժամանակներս պետք ե աշխատել սկսեն, ամրապնդել կուսակցական կազմակերպությունները՝ դրա համար կուսակցության շարքերը քաշելով վորակյալ բանվորների հիմնական կազմակերպիչներին ու հարվածայիններին։ Վորպես առանձին անելիք՝ կենտրոնական կոմիտեն հանձնարարում ե բարձրացնել կուսակցական խավը Զելյարստրոյում, Մագնիտոստրոյում, Ուրալմետստրոյում, Բերեզնյակովսկի շինարարությունում, կուզնեցկոստրոյում, Ավտոստրոյում, Բոբրիկովսկի շինարարությունում, Խարկովի արակտորոստրոյում և կուզմելստրոյում։

Աւանձին ուշադրություն դարձնել կանաց տկտիվի լավագույն մասը դեպի կուսակցության շարքերը քաշելու գործին, այդպիսով արտադրությունում նոր բանվորուհիների մասսայի վրա կուսակցության ազդեցությունն ուժեղացնելու համար։ Համաձարարել Մոսկվայի, իվանովսկի, Արևմտյան ու Լենինգրադի շրջկոմիներին այնպես անել, վոր ուժեղացվի կանանց կուսակցության շարքերն ընդունելու գործը՝ տեքստի արդյունաբերության բանվորուհիների առաջավոր կադրերի հաջին։

Մատնանշելով, վոր սուր կերպով ընկել ե Համամիութենական Լենկոմյերիտմիության՝ կուսակցության շարքերն ընդունվող անդամների տեսակարար կշիռը (1928 թվին 30 տոկ., 1930 թվին 17 տոկ.), կենտրոնական կոմիտեն առաջարկում ե կուսակցական կազմակերպություններին ու Համամիութենական Լենկոմյերիտմիությանը, առանձին ուշադրություն դարձնել կոմսոմոլիստ բանվորների լավագույն մասի, հարվածայինների դեպի կուսակցության շարքերը քաշելու գործին։

3) 1931 թվին «գյուղում անհատական սեկտորի վրա սոցիալիստական տարրերի բացարձակ գերակշռություն» ապահովելու համար՝ բացառիկ սրությամբ ե դրվում գյուղական կուսակցական կազմակերպության ընդարձակման ու ամրապնդման խնդիրը, դրա համար այնտեղ, կուսակցակերպությունում ամուր պրոլետարական կորիգ ստեղծելով գյուղատնտեսական պրոլետարիատի լավագույն մասից ու կուսակցական աշ-

խառանքի հենակետեր ստեղծելով՝ բոլոր սովորովում, մեքենա-տրակտորային կայաններում։ ու խոշոր կոլխոզներում։

Կուսակցական կազմակերպությունների հիմնական ուշադրությունը պետք է դարձրված լինի գյուղատնտեսական պրոլետարիատի, հարվածայինների ու ակտիվիտաների առաջավոր մասը դեպի կուսակցության շարքերը քաշելու գործին, այն մասի, վոր գործով պայքարում ե աշխատանքի սոցիալիստական ձևերի ու բոլշևիկան տեմպերի հիման վրա՝ սովորովների ու մեքենատրակտորային կայանների արտադրական պլանները կատարելու և գերակատարելու համար։ Այդ նպատակով կենտրոնական կոմիտեն առաջարկում ե Միջին-Վոլգայի, Ստորին Վոլգայի, Հյուսիսային Կովկասի, Արևմտյան Սիբիրի ու Կազակատանի յերկրկոմներին, կենտրոնական կոմիտեի Միջին-Ասիխական բյուրոին, Ռւրալի շրջկոմի, Ռևլայնական կոմիտեին, Բելոռուսական կոմկուսի (բ) կենտրոնական կոմիտեին և կենտրոնական-Սև-Հողային։ Շրջանի շրջկոմին այնպես անել, վոր 1931 թվին կուսակցական շերտը բարձրանա բոլոր խորոր սովորովներում ու մեքենա-տրակտորային կայաններում։

Աշխատանք ծավալել դեպի կուսակցության շարքերը քաշելու լավագույն մասն այն կոլխոզների ու կոլտնտեսուհիների, վոր ստուգված են կուսակության դեմ մղված դասակարգային պայքարում, վոր իրանց ցույց են տվել վորպես կոլխոզների ամրապնդման կազմակերպիչներ և

նախաձեռնողներ աշխատանքի սոցիալիստական ձևերի—սոցմբցման ու հարվածայնության ծավալման գործում:

4) Կուսակցության կազմի մեծապես ընդարձակումն առանձնապես առաջ ե քաշում կուսակցական շարքերի ամրապնդման ու դաստիարակման խնդիրը։ Սակայն կան կուսակզմակերպություններ, վոր չնայած կենտրոնական կոմիտեի քանիցս տված հրահանգներին, գեռ բոլցեիկյան դաստիարակությամբ թույլ են ընդգրկում կուսակցության շարքերը նոր մտնողներին (գործական աշխատանքով ու կուսումնունքով)։ Շատ ձեռնարկություններում բոլոր կոմմունիստները չեն, վոր մասնակցում են սոցմբցությանը. 1930 թվին կուսումնունքով ընդգրկված ե կուսակցության թեկնածվական ամբողջ կազմի 38%՝ բոլոր կուսակզմակերպությունները պետք ե անհապաղ կարճամանակյա խմբակների ու դրաբոցների ցանց ծավալեն կուսակցության շարքերը նոր ընդունվածների համար (5-6 դրադմունք), զբաղմունքների բնույթն ու սիստեմը հարմարեցնելով թեկնածուների առանձին խմբերի (արդյունաբերական բանվորներ, գյուղատնտեսական բանվորներ, կոլխոզնիկներ) համար՝ տրված արտադրության առանձնահատկությունների համաձայն։ Անհրաժեշտ ե այնպես անել, վոր շուտափութ կերպով կյանքի մեջ մտցնվեն բոլոր կոմունիստների կողմից սոցմբցությանն ու հարվածայնությանը զիսովին ու իսկապես մասնակցելու վերաբերմամբ կուսակցության XVL համագումարի վորոշումները։ Կենտրոնական կոմիտեն

գտնում ե, վոր սոցմբցությանն ու հարվածայնությանը ակտիվ մասնակցություն ցույց չտվող և որինակելի արտադրական չհանդիսացող կոմունիստը չի արդարացնում բոլցեիկյան կուսակցության անդամի կոչումը։

5) Կենտրոնական կոմիտեյի կազմինը ամենորյա հսկողություն սահմանի, թե ինչպես են աշխատում տեղական կազմակերպությունները՝ կուսակցության սոցիալական կազմի կարգավորման գործում։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԻ ԱՃՈՒՄԸ 1930 ԹՎԻՆ

ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյացկրկոսի - 1931 թ. մարտի
29-ի վորուսը

1. Կուսակցության հիմնական գծի հետևողական իրականացումը, սոցիալիստական շինարարության բոլցիկյան տեմպերի համար մղված պայքարը, աչ և «ձախ» ոպորտունիզմի դեմ մըդաված վճռական պայքարը և Սիրցով-Լոմինաձեյի աջ - «ձախ» բրոկի մերկացումն - ապահովել են մասսաների ակտիվության հսկայական աճումը և նրանց համախմբումը կուսակցության հիմնական գծի շուրջը. այդ բանն իր լրիվ արտացոլումն ե գտել բանվորների և կոլխոզնիկների նոր հզոր հոսանքի մեջ՝ դեպի կուսակցության շարքերը:

Այդ բանն ամբողջովին հաստատվում ե Անդրեկովկասի կուսակցական կազմակերպությունների 1930 թվի աճման արդյունքներով և կուսակցության մեջ ընդունվածների ավելի քան 2 անգամ ավելանալով 1929 թվի համեմատությամբ (22,675 հոգի, 1929 թ. 10,620 հոգու դիմաց):

Արտադրական բանվորներ և բատրակներ ընդունված են 16,296-ը կամ 71,8%:

1930 թվի վերջին յեռամայակում՝ ընդունված բանվորների մեջ մեծամասնությունը հարվածայիններն են (Բագվում - 68,6%, Վրաստանում - 63,5%):

Զքափորամիջակային մասսաների վճռական շրջադարձը դեպի կոլեկտիվացման ուղին և աշխատավոր գյուղացիության առաջավոր տարրերի ակտիվացումը կուսակցության դեմ մղվող պայքարում՝ գյուղի սոցիալիստական վերակառուցման համար - բավականաչափ մեծացրել են չքափորների ու միջակների և, գլխավորապես, կոլխոզնիկների հոսանքը դեպի կուսակցությունը: 1930 թվին Անդրեկովկասում կուսակցության մեջ ընդունվել ե 4,431 գյուղացի՝ 1929 թվին ընդունված 606 հոգու դիմաց. կուսակցության մեջ ընդունված գյուղացիների ընդհանուր քառակից կոլխոզնիկների թիվը, վոր 1929 թվին կազմում եր 25,9%, 1930 թվին հասել ե 63,4%-ի:

2. Դրա հետ միասին Անդրյերկրկոմը նշում ե կուսակազմակերպությունների մեծամասնության անբավարար աշխատանքը՝ կուսակցության աճումը կարգավորելու վերաբերմամբ, վորն իր արտացոլումն ե դտել հետեւյալում: —

ա) Անդրեկովկասի կուսակազմակերպությունների մեջ ընդունվածների կազմում պրոետարական շերտը, վոր 1929 թ. յեղել ե 84,4%, 1930 թվին իջել ե 71,8%-ի. Ադրբեյջանում կուսակցության մեջ ընդունվածների պրոետարական շերտը 84,5%-ից իջել ե 78%-ի (այդ թվում Բագվում 93,8%-ից իջել ե 91,3%-ի). Վրաստանում թեկուղ կուսակցության մեջ ընդունված

բանվորների տեսակարար կշիռը 71,2%-ից բարձրացել է 76,9%-ի, սակայն բավականին նվազել է բատրակների ու գյուղատնտեսական բանվորների շերտը (17,5%-ից իջել է 5,8%-ի), վորով կուսակցության մեջ ընդունվածների բնդհանուր կազմում պրոլետարական շերտը 88,7%-ից ընկել է 82,7%-ի: Կուսակցության մեջ ընդունվածները պրոլետարական խավն առանձնապես սուր կերպով նվազել է Հայաստանում (71,1%-ից իջել է 46,7%-ի):

բ) Գյուղական կուսակազմակերպություններում ընդունվածների կազմում պրոլետարական խավը, վոր 1929 թ. յեղել է 63,2%, 1930 թ. իջել է 34,7%-ի (մասնավանդ Հայաստանում և Վըրաստանում. դրա հետեւանքով բոլոր գյուղական կազմակերպություններում պրոլետարական միջուկը 1930 թվին պակասել է 1,5%-ով):

գ) Առանձին կազմակերպություններում, մասնավանդ, Հայաստանում և Բագվում կուսակցությունում ընդունվածների մեջ բարձրացել է ծառայողների և «մյուսների» տեսակարար կշիռը, միաժամանակ ինժեներա-տեխնիկական ուժերի և գյուղական ուսուցչության լավագույն տարերը չնչին չափով են քաշվել կուսակցության մեջ:

3. Շնորհիվ այն բանի, վոր Անդրկովկասի կուսակազմակերպությունների մեծ մասը պատշաճ ուշադրությունը չի դարձել աճման վորակին և կուսակցության սոցիալական կազմի կարգավորմանը, վոր բանվորների հիմնական մասսաների մեջ մասսայական աշխատանքն անբա-

վարար ե դրեւ, վոր ստորին կուսակցական ողակները (կուսախմբակները) թույլ են աշխատել կուսակցության մեջ ընդունելու գործում և մի շարք կազմակերպություններում գերակշռել են ինքնահոսի տարրերը՝ Անդրկովկասի կուսակազմակերպությունները չեն կատարել այն դիրեկտիվը, թե կուսակազմակերպությունների ընդհանուր կազմում արտադրական բանվորների տեսակարար կշիռը պիտի հասցնել 50%-ի. իսկ առանձին կազմակերպություններում (Հայաստան) 1930 թվին մինչև իսկ վատացել ե սոցիալական կազմը:

4. ՎեկաՊԵ-ի (բ) Անդրկովկասի բոլոր կուսակցական կազմակերպությունների առաջ՝ միջոցներ ձեռք առնել կուսակազմակերպությունների կազմում պրոլետարական միջուկը մեծացնելու համար ուժեղացնելով աշխատանքը կուսակցության մեջ քաշելու առաջավոր բանվորներին և բանվորուհիներին, առաջին հերթին սոցիալիստական շինարարության վճռական ճյուղերում (նավթ, մերտաղ, տրանսպորտ): Հատուկ ուշադրություն դարձնել լավագույն հարվածային կոմյերիտականներին ավելի մեծ չափով կուսակցության շարքերը գրավելու գործին:

Մատնանշելով կուսակցական շերտի փոքրությունը մասնածագործական (մոտ 11%) և լեռնահանքային (մոտ 17%) արդյունաբերությունում ու նոր կառուցումներում՝ ՎեկաՊԵ-ի (բ) Անդրկովկամատական առաջարկում և համապատասխան կուսակազմակերպություններին ուժեղացնել աշխատանքն արդյունաբերության այդ ճյուղերի ա-

ուաջավոր բանվորներին ու բանվորուհիներին կուսակցության մեջ ընդունելու համար:

Կուսակցմակերպությունները պետք ե արտադրական բանվորների հաշվին առահովեն կուսակցության աճման այնպիսի տեմպեր,—բացառիկ ուշադրություն դարձնելով ընդունվողների անհատական ընտրությանն ու վորակական կազմին,—վոր 1931 թվին Սնդրկովկասի կուսակցմակերպությունների ընդհանուր կազմում արտադրական բանվորներ լինեն 50%-ից վոչ պակաս:

Դրա համար առաջարկվում ե՝ Ադրկոմկուսի (բ) կենտկոմին, վոր 1931 թվին կուսակցության մեջ ընդունվողների 85%-ից վոչ պակասը լինեն բանվորներ (արտադրությունից) և բատրակներ, վրաստանի կոմկուսի (բ) կենտկոմին—80%-ից վոչ պակասը, չայաստանի կոմկուսի (բ) կենտկոմին—60%-ից վոչ պակասը:

5. Կուսակցության մեջ ընդունելու աշխատանքը փոխադրել խմբակները, բրիգադները, հերթապահությունները և կոմպլեկտները, բարձրացնելով կուսակցական խմբակների պատասխանատվությունն՝ անկուսակցական ակտիվի մեջ տարփող աշխատանքի ու կուսակցության մեջ բանվորներ ընդունելու համար:

Կուսակցմակերպությունները պետք ե սիստեմատիկ կերպով ուսումնասիրեն առանձին ձեռնարկների, ցեխների և բանվորների զանազան խմբերի կուսշերտի մեջ տեղի ունեցող փոփոխություններն՝ ուժեղացնելով կուսակցության մեջ ընդունելու աշխատանքը հետ մնացող տեղբում:

Կուսակցական—մասսայակամն և քաղ-կրթական աշխատանքի ամբողջ սիստեմում առանձին ուշադրություն դարձնել հարվածայիններին, նըրանց համար կազմակերպելով հատուկ խմբակներ, դասընթացներ, դպրոցներ, զրույցներ և այլն:

Առաջարկել Ազգային կոմկուսների կենտկոմներին և ստորին կուսորգաններին՝ ապահովելու վեկԱՊԵ-ի (բ) կենտկոմի 1930 թ. սեպտ. 13-ի վորոշման իրագործումը՝ կուսումնական ցանցով անկուսակցական ակտիվն ընդգրկելու մասին:

6. Կուսակցության ճիշտ ազգային քաղաքականությունն ապահովել ե անդրկովկասյան կուսակցմակերպությունների բավականաչափ աճումը՝ Անդրկովկասի բնիկ ազգությունների հաշվին (1930 թվին կուսակցության մեջ ընդունվածների կազմի 74,1%-ը, 1929 թ. 71,9%-ի փոխարեն): Դրա հետ միասին ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմը նշում ե, վոր Ադրբեյջանում կուսակցության մեջ ընդունված թուրքերի տոկոսը 1930 թվին ընկել ե 41-ի, 1929 թվի 42,7%-ի դիմաց:

ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմն Ազգային կոմկուսների կենտկոմների, ըլջոմների և ռայկոմների հատուկ ուշադրությունն ե հրավիրում այն բանի վրա, վոր անհրաժեշտ է կուսակցմակերպության աճման հետագա ուժեղացումն՝ Անդրկովկասի բնիկ ազգությունների հաշվին, ձեռնարկում և գյուղում տարվող ամբողջ մասսայական աշխատանքը մեծ չափով հարմարեցնելով բազմազգի Անդրկովկասի պայմաններին:

Առաջարկում է Ադրբեյլով կուսկազմակերպություններին՝ միջոցներ ձեռք առնելու, վոր մինչև հունվարի 1-ը կուսկազմակերպությունների կուսաձման գործում՝ թուրք բանվորների և բատրակների հաշվին:

7. Անբավարար համարելով կուսկազմակերպությունների աճումը գյուղում՝ Անդրյերկոմը պահանջում է բոլոր կուսկազմակերպություններից, առաջին հերթին բամբակային ու անասնաբուծական, մեքենատրակտորային կայանների ու սովխոզների ռայոնների կուսկազմակերպություններից, աճման մեջ արմատական բեկում առաջ բերել՝ բանվորների ու բատրակների հաշվին, և սովխոզները, մեքենա-տրակտորային կայաններն ու խոշոր կոլխոզները դարձնել գյուղի կուսաշխատանքի հետակետեր. Դրա համար՝ գյուղական բջիջներն ընդունվողների կազմում բանվորների և բատրակների տեսակարար կշիռ պետք է լինի 40%-ից վոչ պակաս:

Հատուկ ուշադրություն կենտրոնացնելով սովխոզների, մեքենա-տրակտորային կայանների բանվոր-հարվածայիններին և ակտիվիստ բատրակներին կուսակցության մեջ ընդունելու վրա՝ գյուղական կուսկազմակերպությունները պետք է շարունակեն կուսակցության մեջ գրավել այն առաջավոր կոլխոզներին, վորոնք կուտակության դեմ մղած ակտիվ պայքարով իրենց նվիրածությունն են ապացուցել կուսակցությանը, վորոնք իրենց հանդես են բերել վորպես կոլխոզյին շարժման կազմակերպիչներ և կոլխոզներում սոցմրցման ու հարվածայնության նախաձեռնողներ:

Առաջարկել բոլոր կուսկազմակերպություններին՝ միջոցներ ձեռք առնելու, վոր մինչև հունվարի 1-ը կուսկազմակերպությունների կամ թեկնվածական խըմբակներ կազմակերպվեն՝ 20-ից վոչ պակաս մըշտական գյուղատնտեսական բանվորներ ունեցող սովխոզներում ու մեքենա-տրակտորային կայաններում:

8. Մատնանշելով, վոր կուսկազմակերպությունների մեծամասնությունը չի իրագործել ՎեկԱՊԵ-ի (Բ) կենտկոմի և Անդրյերկոմի դիրեկտիվները՝ թեկնածուներին կուսումնունքով ու հասարակական-քաղաքական բեռնավորումով ընդգրկելու մասին, զրա սրբյունքն այն ե, վոր թեկնվածական կազմը գեւևս բավականաչափ մաղվում ե. ՎեկԱՊԵ-ի (Բ) կենտկոմն առաջարկում է Անդրյերկոմի կուլտապրաբաժնին և Ազգային կոմկուսների կենտկոմներին՝ ապահովել մոտակա ամսվա ընթացքում ամբողջ թեկնածվական կազմը կուսումնունքի հատուկ ցանցով լիովին ընդգրկելը և նրանց հետ սիստեմատիկ աշխատանք կազմակերպել (զրույցներ, թեկնածուների ամրացում հին կուսակցականներին և այլն), այնպես որ թեկնվածական ստաժն իրոք ոգտագործվի թեկնածուներից կայուն լենինյաններ դաստիարակելու համար:

9. Դեռևս անբավարար համարելով կանանց կուսակցության մեջ ընդունելու համար տարվող աշխատանքը (1930 թ. ընդունվածների կազմի 8,9%-ը)՝ ՎեկԱՊԵ-ի (Բ) Անդրյերկոմը խնդիր է գնում Սնդրկովկասի բոլոր կուսկազմակերպությունների առաջ աշխատելու, վոր 1931 թվին

կուսակցության մեջ ընդունվողների ընդհանուր թվում կանանց տոկոսը 12-ից պակաս չլինի։ Այդ նպատակով պետք է հատուկ աշխատանք ծավալել կանանց ակտիվի մեջ, զլիսավորապես ձեռնարկների և սովորողների պատվիրակուհիների ժողովներում աշխատողների մեջ, նաև կազմակերպել հատուկ խմբակներ՝ ակտիվիստ բանվորուհիներին և լավագույն կողանտեսուհիներին պատրաստելու կուսակցության մեջ ընդունելու համար։

10. Մատնանշելով, վոր դեռևս մի շարք տեղերում չի վերացվել բանվորներին կուսակցության մեջ ընդունելը ձևակերպելու վոլոկիտան, Վեհական Պետք (բ) Սնդրյերկրկոմն առաջարկում եռային կոմիտեին, քաղկոմներին և բջիջներին՝ ընդունելությունը ձևակերպել վոչ ուշ քան 20 որվաժամկետում։

11. Պարտավորացնել Ազգային կոմկուսների կենտկոմներին, ըրջկոմներին և քաղկոմներին ապահովելու, վոր Յ. Հ. կատեգորիայով (ծառայողներ և «մյուսներ») կուսակցության մեջ ընդունվողները խիստ ընտրության յենթարկեն, այդ կատեգորիայով ընդունվողների վերաբերմամբ իրենց հաստատելու իրավունքն ոգտագործելով վոչ թե ձևականորեն, այլ կուսակազմակերպությունների աճումը կարգավորելու խնդիրների համաձայն։

12. Գրավելով կուսակցության մեջ առաջավոր պրոլետարներին ու լավագույն ակտիվիստներունիկներին և նրանց դաստիարակելով ու ամրապնդելով կուսակցության հիմնական գծի

համար տարվող պայքարում՝ զբա հետ միասին Անդր կովկասի կուսակազմակերպությունները պետք են իրենց շարքերը սիստեմատիկորեն մաքրեն բոլոր ոպորտունիստներից, տատանվողներից, անկայուն և յերկյերեսանի տարրերից, բոլոր նրանցից, ովքեր խանդարում են կուսակցության հիմնական գիծը տանելուն և դավաճանում են սոցիալիզմի շինարարության գործին։

**ԱԴՐԿՈՄԿՈՒՄԻ (Բ) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՑԻ
ՈՒ ԲԱԳՎԻ ԿՈՄԻՏԵՑԻ ՄԻԱՅՅԱԼ ՊԼԵՆՈՒՄԻ
ԲԱՆԱՉԵՎԸ**

Կուսակցության անումն ու նրա հետագա
կարգավորման խնդիրները բաղադրում յեւ
գյուղում

**ՎԵԿԱՊԵ-Ի (Բ) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՔԻ ՊԵ-
ԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂՋ ՓՐՈՆՏԻ ՎՐԱ ԿՈՒՍԱԿ-
ՀՈՒԹՅԱՆ ՎԱՐԱԾ ԱՊԵՀԱԼԲԱՏԱԿԱՆ ԾԱՎԱԼՈՒՆ
ՀԱՐՁԱԿՄԱՆ, աջ և «Ճախ» ոպորտունիստների
գեմ մղած պայքարում կուսակցության հիմնա-
կան գծի հետևողական իրազործման հետ զու-
գընթաց՝ առաջ ե գնում բանվոր գասակարգի,
բատրակության, չքավորության ու կոլխոզների-
ների լայն մասսաների քաղաքական ակտիվու-
թյան չտեսնված աճումը, վորոն արտահայտվում
ե սոցիսլիստական մրցության, հարվածայնու-
թյան ծավալումը և լավագույն բանվորների՝ մեր
կուսակցության շարքերը մտնելու մասսայական
հոսանքով:**

Վճռական պայքար մղելով յերկու ֆրոնտի
վրա—աջ թեքման՝ վորպես զլսավոր վտանգի
գեմ, ամբողջ կուսակցության հետ մերկացնելով
Հոմինաձե-Միջոցի անսկզբունք «Ճախ»—աջ բլո-
կը, շարունակելով անսկզբունք խմբակցության

ամեն տեսակ յերկույթներն արմատախիլ անե-
լը,—Աղբեցանի կազմակերպությունը բարձրաց-
նում է կուսակցական շարժերի գաղափարա-
կան-քաղաքական մակարդակը, լծվում ե նավ-
թի, տրանսպորտի ու բամբակի մարտական խըն-
դիրների լսւծմանն ու ձեռնարկում ե Բագվի
բանվորների պրոլետարական ազդեցությունը
գյուղի վրա ամրապնդելու գործին:

Բանվոր դասակարգի, չքավորության, բատ-
րակության ու կոլխոզների կողմից դեպի
կուսակցությունը յեղած խորին վստահության
կոնկրետ արտահայտում յունը Աղբկոմկուսի (Բ)՝
ամբողջապես վերցրած և զլսավորապես Բագվի
կազմակերպության մեծ աճումն ե՝ մանավանդ
վերջին 4 ամսում (9,000 դիմում ե տրված):

Առաջիկա ժամանակաշրջանի վճռական խըն-
դիրը պետք ե հանդիսանա մասսայական աշխա-
տանքի անշեղ խորացումը, կուսակցության ան-
դամագրության պլանային աշխատանքի կազմա-
կերպումը, հարվածային բանվորների, կոլխոզ-
ների բարակության և չքավորության հաշ-
վին անման ՏԵԽԱՎԵՐՈՒՄ ունեցած նվաճումների
ամրապնդումը, անշեղ կերպով պրոլետարական
խավը բարձրացնելով Աղբկոմկուսում (Բ):

Աղբկոմկուսի (Բ) 1930 թվի կազմի աճման
և կարգավորման դրությունը բնորոշվում ե հե-
տեւյալ հիմնական ցուցանիշներով.

ա) Բագվի կազմակերպությունում ընդուն-
վել ե 6.568 հոգի, ի դիմաց 1929 թվին ընդու-
նած 3,118 հոգու։ Մանավանդ վերջին յերամ-
պակում բարձրացել ե աճման տեմպը քաղա-

քում և գյուղում (Բագվում վերջին յեռամսյակում ընդունվել ե 2,331 հոգի ու դեռ չի ձևակերպված 3,500 դիմում: 31 ուայնների գյուղերում վերջին յեռամսյակում ընդունված ե 1,192 հոգի, իսկ 29 թվին բոլոր գյուղական կազմակերպություններում ընդունվել են 2,369 հոգի):

Վերջին ժամանակաշրջանում, լենինյան որերի ու Բագվորհրդի վերընտրությունների առաջիկ Բագվի կազմակերպությանը դիմում են ներկայացրել 3,414 հարվածային բանվորներ: Հունվար ամսին Բագվում ընդունվել ե 1,208 հոգի, փորոնցից 95,7 տոկոսը հասարակական քաղաքական աշխատանքում ակտիվ մասնակցություն ցույց տված առաջավոր հարվածային բանվորներ:

բ) 1930 թվին կուսակցության շարքերն ընդունվածների սոցիալական խավը հիմնականում նաև ապահովանում ե ՎեկԱՊե-ի (բ) Կենտրոնական կոմիտեյի նոյեմբերյան պլենումի հրահանգներին: Բագվի կազմակերպությունում ընդունվածների կազմի 92,6% ն արտադրությունում աշխատող բանվորներ են: Աղբկոմի կուսակցությունում ամբողջությամբ վերցվի կազմակերպությունում — 70,2%-ը, Բագվում կազմակերպությունում — 61,1%-ը, Բագվում կազմակերպությունում — 30 թվի հոկտեմբերի 1-ին յեղած տվյալներով՝ գյուղական կազմակերպությունում բանվորական խավը 39,8% եր կազմում: 1930 թվին բանվորական կորիզը մեծացել ե թե ամբողջ Աղբկոմի կուսակցությունում:

գ) Նշանավոր չափերով բարելավվել ե կուսակցության շարքերն ընդունվողների վորակը: Վերջին 9 ամիսներում Բագվի կազմակերպությունում ընդունվածների կազմում 10 տարուց ավելի արտադրական ստած ունեցող արտադրական բանվորները 61,3% ե կազմում: Վերջին կան բանվորները 66%-ը բանվորական ժամանակում լենդունվածների 66%-ը բանվորական ակտիվում են գտնվում և մասնակցում են սոցմքցության ու հարվածայնությանը: Գյուղական կազմակերպություններում նոր անդամներ են ընդունվել գլխավորապես այն ակտիվ չքավորներից, գյուղատնտեսական բանվորներից կոլխոզներից, փորոնք տնտեսական-քաղաքական միջոցները կյանքի մեջ մտցնելու գործում իրանց ցույց են տվել վորպես ակտիվ մարտիկներ:

Կանանց գեղի կուսակցության շարքերը քաշելու վերաբերմամբ գըությունը միանգամայն անբավարար ե: Աղբկոմի կուսում (բ) 1930 թվին ընդունված ե 578 կին:

Զնայելով 1929 թվի համեմատությամբ ընդունվածների կազմում թուրքերի աճումը բարձրակ բարձր է Աղբկոմի կուսակցությամբ 1931 թվի հունվարի 1-ին այնուամենայնիվ 39,2%-ից եջել ե 38,2%-ի: Այս թուրքերի թիվը 39,2%-ից եջել ե 38,2%-ի: Այս կազմակերպությունները ցույց են առնեն, փոք կուսակցմատվյաները թուրք աշխատանք են տանում կերպությունները թուրք աշխատանք են տանում թուրք կազմակերպությունները թիվը աճելու գործում:

Դրա հետ միասին թուրքերի թիվը աճելու կողմից վերջին յեռամսյակին ընկումն կա ֆար-

բիկ-գործարանային ու Բայիլի ռայիններում:
 Դ) Նշելով կուսակցության աճման ուժեղացած թափը 1930 թվին, մանավանդ վերջին յեռամյակում, հաստատել, վոր Բագվի ռայիկումներն ու գործական կազմակերպությունները բարականաչափ աշխատանք չեն՝ տարել կուսակցության շարքերը նոր անդամներ ընդունելու և նրա կազմի կարգավորման գործում: Դա կայանում է հետեւյալում. — աճման տեմպերը դեռ չեն համապատասխանում այս աճած ակտիվությանն ու արտադրական վերելքին, վորոնցով համակված են բանվորների լայն մասսաները: Բացակայում ե կուսակցության շարքերը նոր անդամներ քաշելու սիստեմատիկ աշխատանքը:

Միանգամայն անհանդուրժելի ե, յերբ կուսակցմակերպությունների մեծ մասը անդամագրման խոր աշխատանք չեն տանում, ամեն որ այդ աշխատանքը չեն կապում բանվորների աճող քաղաքական ու արտադրական ակտիվության հետ: յե) Աղբկոմկուսի (բ) ռայկոնները կանոնավոր կերպով չեն զբաղվել կուսակցության կազմի աճումով ու կարգավորումով: Թույլ ե գըրված նոր ընդունվածներին կուսակցության շարքերում ամրացնելու համար տարվող գաղափարական-քաղաքական աշխատանքը, ինչպես և նրանց հասարակական-քաղաքական աշխատանքի կուսումունքի քաշելու գործը:

Բավականաչափ ուշադրություն չի դարձնվում ջոկման գործին և անթույլատրելի կերպով դանդաղ ե գնում կուսակցության մեջ բանվորների ընդունման ձևակերպումը, վորի հետեւ

վանքն ե կազմակերպությունից նշանակոր չափով հեռանալը: Միանգամայն անբավարար ե ամրապնդվում կուսակցական խավը հիմնական ցեխերում, վորտեղ կոմունիստների տոկոսն ացելի ցածը ե, քան ոժանդակ ցեխերում («կեցելի ցածը»): անվան ֆարբիկ, «Շմիդտի» անվան գործարան և այլն):

Յելնելով այս բոլորից՝ կենտրոնական կոմիտեի ու Բագվի կոմիտեի միացյալ պլենումը վարոշում ե.

1) Աղբբեջանի կուսակցական կազմակերպության կազմի աճմանն ու կարգավորմանը վերաբերող ամբողջ հետագա բոլոր աշխատանքում յելնել կազմակերպությունում պրոեկտարական կորիզը բարձրացնելու հիմնական խնդրից, Բագվի կազմակերպության բոլոր ողակների ուշագրությունն իսկապես ուժեղացնելով դեպի լավագույն արտադրական հարվածայինների, ակտիվիստների անդամագրման գործը, խստիվ կարգավորելով կիսա պլրութարական և մանավանդ վոչ-պլրութարական տարրերի ընդունելությունը:

2) Աղբբեջանի կազմակերպության աճման Տեղական հետագա ուժեղացումը շարունակել, մի դեպքում թույլ չտալով ունեցած մակարդակի իշեցումը, դրա համար վճռականորեն բարելավելով անդամագրման աշխատանքի մեթոդներն ու ձեերը և կուսկազմակերպության բոլոր ողակներում աճման դեկավարությունը բարելավելով, այսպես անել, վոր կուսակցության բոլոր անդամներն ակտիվ մասնակցություն ունենան անդամագրման աշխատանքին:

3) Այնպես անելու վոր դեռ 1931 թվի առանում թուրք պարուետարներ ընդունելու թիվը արացնել թուրք-բանվորների ընդունելությունը, և հետագայում անշեղ կերպով բարձ-չթուրքացնելով վորակական պահանջները՝ նոր ընդունվողների վերաբերմամբ:

4) Կուսակցական կազմակերպությունների մասսայական աշխատանքի բնագավառում անհապաղ բեկում առաջացնել, դեպի բանվորների զանազան խափերը դիմումների պահովելով և առանձին ուշադրություն դարձնելով թուրք կազմակերին: Պարտավորեցնել բոլոր բոլոր կուսակցական և պրոֆեսիոնալ կազմակերթափոխների վերակառուցումը՝ գիշերվա հերկան մասսայական սպասարկումն ապահովելու գծով: Կենտրոնական նոմիսեի կազմի բաժնեանդամներին ու Ագիտմասսբաժինը պետք է հերթակալ բանվորների հետ տանելիք մասսայական աշխատանքի կոնկրետ ձևեր ու մեթոդներ մշակեն, առանձին ուշադրություն դարձնելով ավելի խոր մասսայական աշխատանք կատարելու վրա:

5) Բոլոր կուսակզմակերպությունների վրա շարքերը նոր ընդունվածների ամրապնդումն ու կուսակցական-քաղաքական դաստիարակությունը: Անհրաժեշտ է գնականորեն այնպես անել վոր ամբողջ թեկնածական կազմը քաղղորդի-

տության գործոցներում ուսմունքով և կուսակցութության մյուս աեսակներով ընդգրկվի: այդ խնդիրը մանավանդ սուր ե կանգնած այս պատճառով, վոր վերջին յեռամյակում թեկնածվական կազմի մեջ մտածների 75%-ն ուսմունքով չի ընդգրկված: Դրա հետ միասին անհրաժեշտ է վճարականորեն թեկնածունենին ակտիվ հասարակական-քաղաքական աշխատանքի համեմ, նըրանց կուսակցական աճման, կուսակցական կյանքին ակտիվ մասնակցություն ունենալու և երանց շարժերում բոլենվիկյան կուսակցականությունն առաջիկելու անհրաժեշտ պայմանները:

Դեպի կուսակցության շարքերը յեղած մասսայական հասանքը նոր ձևի ե դնում կուսակցության խնդիրները, կուսակզմակերպությունների առաջ գնելով բանվորների և կոլլագնիկների ակտիվի, ինչպես և գյուղի չքաղոր-բատրակային ամբողջ հիմնական մասսաները կուսակցական-դաստիարակչական աշխատանքով ընդգրդիկելու անհրաժեշտությունը:

6) Կուսակցության շարքերը նոր մասնողների հետ տարբող գաղափարական-քաղաքական աշխատանքի կոնկրետ բովանդակությունն այն պետք ե լինի, վոր մեր կուսակցության ծրագրի ու կանոնագրության բազայի վրա՝ յուրացնվելոցիստական շինարարության նոր ետապի ելությունը, ինչպես և կուսակցության յուրաքանչյուր անդամ, ինչ պաշտոնում ել նա գրաքանչյուր ամբողջ անդամի, վորպես շինարարության առաջանդիվիս լինի, վորպես շինարարության առաջանդիվիս վոր մարդիկ՝ այդ շրջանի առանձնահատկություն-

ներից բղխող պարտականությունները պետք է
յուրացնի:

Կուսակցության շարքերը մտնողներին, ինչ-
պես և անկուսակցական ակտիվը լիովին ընդ-
դըրկելու համար՝ թեկնածվական դպրոցների
լրացուցիչ ցանց ծավալել: Բագվի կոմիտեի կուլտ-
բաժինը պետք է ապահովի այդ դպրոցների
ծրագրային-մեթոդական սպասարկումը:

Ուսմունքը պրոպագանդիստներով ապահովե-
լու համար՝ կուսումունքի միջին ու բարձրա-
գույն ողակները վերջացրած կուսակցական բան-
վորներից առաջ քաշել վոչ պակաս քան 300 հո-
գի, նրանց համապատասխան կերպով նախա-
պատրաստել և նրանցից վոչ պակաս քան 200
հոգի շտապ կերպով Բագվի կոմիտեին կից կարձ-
ժամանակյա հատուկ կուրսերը մտցնել՝ 10 որով
ազատելով աշխատանքից:

7) Հաստատելով, վոր ուայկոմներն անուշա-
դիր են յեղել դիմում ներկայացրածների ընդու-
նելության ձևակերպմանը, ուայկոմներին առա-
ջարկել 20 որում ձևակերպել դիմում ներկայաց-
րածների (3,500 հոգի) կուսակցության շարքերն
ընդունելու դործը, պահելով նոր ընդունվողնե-
րին ներկայացվող բոլոր պահանջներն ու պայ-
մանները: Պարտավորեցնել ուայկոմներին՝ հետա-
գյում ընդունելությունները ձևակերպել տաճան
որվա ընթացքում, խիստ պատասխանատվության
յենթարկելով բոլոր նրանց, ովքեր բյուրոկրա-
տական ձևականությամբ են մոտենում ընդհա-
նուր-կուսակցական խոշորագույն անելիքներին:

8) Գյուղի սոցիալիստական վերակառուցման
լայն ծավալված պրոցեսը առանձին սրությամբ
է զնում գյուղական կուսակցական կազմակեր-
պության ամրապնդման, կուսակցության հիմ-
նական վիճը վիճեցնող՝ սոցիալական-խորթ և
ոպորտունիստական տարրերից զտումը:

Այդ պատճառով՝ կուսակցության աճմանը
վերաբերող առանձնապես բարդ անելիքներ ե-
ղովում գյուղական կազմակերպությունների ա-
ռաջ և այնտեղ անհրաժեշտ է, ամուր, մարտո-
նակ կազմակերպություններ ստեղծել՝ նրանց
կցելով վորակյալ գործիչներ: Դրա համար ջոկ-
վում և ուղարկվում ե 100 հոգի՝ իբրև գյուղա-
կան, կոլխոզային, սովխոզային բջիջների քար-
տուղարներ: Ռայոնական կազմակերպություն-
ների քանակական և վորակական ամրապնդումը,
կուսակցական ուժեղ բջիջներ ստեղծելը, փորոնք
կործով կարող են գյուղի-սոցիալիստական վե-
րակառուցման գլուխ անցնել և կուսակցական
դեկավարությամբ ընդգրկել սովխոզների կոլխոզ-
ների, մեքենա-արակատորային կայանների հիմնա-
կան գյուղատնտեսական մասերը, առանձնապես
բամբակային ռայոններում կուսակցության հա-
ջող աշխատանքի անհրաժեշտ նախապայման և
հանդիսանում: Յեկենելով այդ հիմնական խնդիր-
ներից՝ ՊԼԿՆ ու մը վորոշում ե.

ա) բամբակային ռայոններում ուժեղացնել
կուսակցության նոր անդամներ ընդունելու դոր-
ծըն այսպես, վոր հիմնական բամբակային մա-
սերը (գյուղ-կոլխոզ) ընդգրկվեն կուսակցիջների
և թեկնածվական խմբերի ցանցով, և դա արվի

կուլակության դեմ մզված պայքարում ստուգած, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում իրանց ցույց տված ակտիվիստ կոլխոզնիկների, բարակների ու չքավորության ձեռքով.

բ) կուսակցական խավերի ամրապնդել կուսաքիջների ցանցն ու կազմը սովխոզներում և մեքենա-տրակտորային կայաններում: Սովխոզների ու մեքենա-տրակտորային կայանների գծով անհրաժեշտ ե կուսակցության շարքերը քաշել սովխոզների ու մեքենա-տրակտորային կայանների մշտական բանվորների թվից իրանց ցույց տված լավագույն հարգածայիններին: Դրա հետ միասին ի նկատի ունենալով կուսակցության մեջ կոլխոզնիկների չափազանց ցածր տոկոսը, անհրաժեշտ ե ուժեղացնել կուսակցության շարքերը քաշելու դասակարգային պայքարում ստուգված ակտիվիստ կոլխոզնիկներին, այդ ամբողջ աշխատանքը կապելով գյուղական կուսկագմակերպություններն ամրապնդելու ու գյուղի բոլոր կոմունիստներին դիմումին կոլխոզ քաշելու աշխատանքի հետ.

գ) այն ուայոններում, վորտեղ կազմակերպության անդամների թիվը շատ ցածր ե (Դաստափյուր, Քելբաջար, Սամուխ և այլն), անհրաժեշտ ե ուայոնի հիմնական գյուղերում թեկնածուական խմբեր կազմակերպել ու գեղի կուսակցություն քաշել ուայոնի չքավորության ու բարակների լավագույն առաջավորներին: Այդ ուայոններում կուսակցության աճումը ընդհանուր-կուսակցական խոշորագույն խնդիր ե հան-

դիսանում, վորի լուծման շուրջը պետք ե կենտրոնացնվեն կենտրոնական կոմիտեի ու ուայկոմ-ների ջանքերը: Կենտրոնական կոմիտեի կազմների մայն բաժինը պետք ե 10 որում միհրանգչական բաժինը պետք ե չոցներ մշակի այդ ուայոններն ամրապնդելու և ջոցներ մշակի այդ ուայոններն սովորաբնակելու կուսակցության մեջ նոր անդամներ ընդունելու համար.

դ) ինկատի առնելով այն հանգամանքը, վորդյուղական ուայոններում քիչ ե պըռպագանդիստական ուժերի թիվը, պարտավորացնել Ադրակոմկուսի (բ) ուայկոմներին, խստիվ հաշվեառել յեղած կազմերը և լիովին ոգտագործել կուսակցության ավելի հաստատուն, տոկուն անդամներին պըռպագանդիստական աշխատանքում՝ ամենից առաջ թեկնածուների, անկուսակցական չըքափորների և սովխոզների ու մեքենա-տրակտորային կայանների բանվորների կոլխոզային ակտիվի հետ:

Ազրկոմկուսի (բ) կենտրոնական կոմիտեի կազմհրահանգչական բաժինն ու կուլտոպրոպերժինը պետք ե ամենամոտ ժամանակում ավարտեն գյուղական ուայոններին մշտական պըռպագանդիստներ և խորհրդային-կուսակցական դըպոցներից դասավանդողներ տալու գործը:

Հ ե ց Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

Հ ե ց Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն



ՎԵՐԱԿԱՌՈՒԾԵՆԻ ԱԳՐԻԿՈՄԿՈՒՍԻ (Բ) գյուղական
բջիջների աշխատանքը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱԽՆ

b2

1. ՎԵԿԱՊԵ-Ի (Բ) ԿՈՂՈՎՈՂԱՅԻՆ ԲՋՋԻ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
(Հաստատված ՎԵԿԱՊԵ-Ի (Բ) ԿԵՆԱԿՈՄԻ ԿՈՂՄԻՑ 1930 թ.
26 ոդոսում) 3
2. ԿՈՂՈՎՈՂԱՅԻՆ և դյուլական կուսքիչների կազմակերպչա-
կան կառուցվածքի վերակառուցման մասին (Աղբկոմկու-
սի (Բ) կուսչինարարության սեկտորի ինստրուկցիան) 24
3. ՎԵԿԱՊԵ-Ի (Բ) ԿԵՆԱԿՈՄԻ վորոշումը կուսակցության
աճման մասին 1930 թ. 31
4. Անդրկոմկասի կուսկազմակերպությունների աճումը
1930 թ. 38
5. Աղբկոմկուսի (Բ) ԿԵՆԱԿՈՄԻ Բագվի Կոմիտեյի միաց-
յալ պլենումի բանաձեռ՝ „Կուսակցության աճումը և նրա
հետագա կարգավորման խնդիրները քաղաքում և գյու-
ղում” 48



«Ազգային գրադարան



NL0191321

ԳԻՒՆ Ե 40 ԿՈՊ.

ԱՐԴ
ԳՐ Օ

**A. K. (b) F. qənt əzəqlərinin işini
jenidən kymak ygrynda**

AZƏRNƏŞR

Baqъ—1931
